# Ավետիք Իսահակյան

## Հովհաննես Հովհաննիսյանին, 1913թ . , ապրիլի 30, Ժնև

Շատ սիրելի բանատեղծ՝
Հովհան. Հովհաննիսյանին
Այս հանդիսավոր օրը, որ հայ հասրակության գիտա¬կից մասը գալիս է Քո վաղաժամ ճերմակած գլուխը պսակելու, ես հեռվից հեռու գլուխ եմ խոնարհում ուսուցչիս և ընկերիս առաջ՝ հայտնելով այն խորին սերն ու հարգանքը, որ անթառամ ունեցել եմ սրտիս մեջ՝ սկսած այն օրից, երբ Քեզ տեսա առաջին անգամները:
Առաջին անգամ ես Քեզ տեսա, երբ պատանի էի և աշակերտեցի Քեզ Գևորգյան ճեմարանում: Այն ժամանակ դու պայծառ երիտասարդ էիր՝ բանաստեղծական ցողով ու շաղով վառ, այն ժամանակ ես առաջին անգամ խմեցի բա¬նաստեղծության նոր, իսկական աղբյուրից, որովհետև դու ինքդ էիր ոսկեղեն աղբյուրը, որ կարկաչում էիր հայոց հին և նոր երգերի սահմանագծում:
Ձանձրացնելու չափ շատ է ասված, որ հայ գրողը նահատակ է. սակայն նահատակ է ո՛չ միայն տնտեսապես, այլև այն, որ նա չի կարդացվում, անհայտ ու մոռացված է մնում և նույնիսկ արհամարհված, որովհետև հայ մասսան ցավալիորեն տգետ է, իսկ ց՝լուխը օտարացած, այլասերված: Եվ ուրեմն որքան մեծ սեր պետք Է ունենալ դեպի մայրենի խոսքը, որ երեսուն տարի շարու¬նակ բարբառել է անապատի մեջ:
Եվ քո կերտվածները, քանակով քիչ, իսկ որակով սքան¬չելի և անգնահատելի, իբրե իսկական գոհարներ, կշողան ու գերագույն հրճվանքով կլցնեն ընտիր հոգիները այնքան ժամանակ, որքան ժամանակ Արազը կուգա լափին տալով, և

Ալագյազ բարձր սարին ձյուն կկիտվի կատարին, և հայ խոսքը կհնչե Ազատ Մասիսն ի վեր...
Հոգով ու սրտով մասնակցում եմ Քո տոնին, բոլորի հետ միասին բարձրացնում եմ գավաթը և ջերմ-ջերմ համբուրելով Քեզ, իմ շատ սիրելի ուսուցիչ և ընկեր, մաղթում եմ առողջություն, ուրախություն և երկար կյանք:

Միշտ քո՝
Ավետիք Իսահակյան